738

1. Մեղանչել եմ ես նորից,
Բայց եկել եմ քո առաջ,
Չեմ նայում Քո աչքերին,
Քանզի մեղավոր եմ շատ:

Ամաչում եմ ու պատկառում
Գործած մեղքերիս համար,
Ների՛ր, զղջում եմ ուժգին
Եվ խոնարհվում Քո առաջ:

2. Գիտեմ՝ չունեմ արժանիք
Սրբարանդ մտնելու:
Գիտեմ՝ չունեմ արժանիք,
Տե՛ր, Քեզ որդի կոչվելու:

3. Առանց Քեզ ես չեմ կարող
Ներել, սիրել ու ապրել:
Հիսո՛ւս, Քեզ եմ ես ուզում,
Քո արյունն եմ աղերսում:

Հիսո՛ւս, փոխիր իմ կյանքը,
Տո՛ւր ինձ նոր սիրտ, նոր հոգի,
Որ ապրեմ ես Քեզ համար,
Հոգիս Հոգուդ հետ ձուլվի:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025